91.



ՀԱՆԴԷՍ ՄԵՍՐՈՊՊԵԱՆ

Հրատարակի ամեն ամսու մէկին։
Սարագրութեան տեղին է՝ . . .
Վարթա Յ. Մուհենթեան տպարանը.
Զմիւռնիա Թանդարան Վարդապետական Ընկերութեան։
Միջագիւղ վերծանութեան Թանդարանը։

Տարեկան դինն է կանխիկ. 60 ղուրուշ
Վեցամսեայ „ „ 35 „
Դուրս երթալիք հանդէսներու համար ծախքը առանձին վրայ է։
Սարագրութիւնները առաջին թիւէն կսկսին։

1 ՄԱՐՏ Ա. ՏԱՐԻ 1862 ԹԻՒ 9

ԱՕԳՈՒՅԻՆ

Ընդդէմ բարեկամք

Խմբագիրը Վարդ հանդէսի

Խնդրեմ՝ ձեզ ուղղած հետևեալ յօդուածը հանդէսիդ միջոցաւ հրատարակելու յօժարիք։

Ո՛անչնալով գրագիտական մասին ունեցած ամենափոքր ձեռնհասութիւնս, չեմ համարձակիր այնպիսի նիւթոյ մը վրայ ճառելու և քամել խակ գրչէս այնպիսի վսեմ յօդուած մը որ ճշմարիտը ըսելու համար թէ արդէն քանի քանի անգամներ զոնաղան գոյներով այլ և այլ ձևերով երևցաւ և թէ այսուհետև ալ շարունակելու պէտք ըլլայնէ պարտական եմ՝ անմիջապէս աւելի աշխոյժ և բարձրը գրիչներու թողուլ անոր մեծամեծ արդեանցն ու օգտին նկարագրութիւնը։

Ցմտանանք ըսել թէ մեր համառօտ ջատագովութեանը ենթակայ եղող առարկայն ԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆՆ է։

Թատրոնը լուսաւորութեան ճեմելեաց մէջ արագ քայլ առնող Եւրոպայի մէկ քանի քաղաքակիրթ Ազգաց՝ յառաջադիմական դըրախտին բաղմաբեղուն մէկ ծառատունկն է որ շատերուն պէս մեր Ազգային յառաջադիմութեան պարտեզին մէջ չկար։

Տեսաւ ու սովրեցաւ, Փարիզի մէջ ուսեալ հայազգի հմուտ երիտասարդ մը թատրոնին կարևորութիւնը, գիտցաւ որ Ազգին համար ամեն կերպ անձնուրացութիւն՝ չիրնայող անհատի մը յոյսը վերջապէս կը պըսակուի, ինքն ալ ձեռք զարկաւ ասանկ սքանչելի գործողութեան մը ու մեծամեծ խոչընդոտներ անխոնջ աշխատանքով յարատևական ջանքերով տապալելէն ետքը յաջողեցաւ, իրեն յօրինած Ազգային սրտաշարժ ողբերգութիւններովը տաքցուց նախ մէնմի աշխոյժ և ազնիւ երիտասարդաց դլուխը ու ինքն անոնց առաջնորդը եղած Հայ հասարակութեան աչաց առջև Ազգային ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆ մը՝ բացաւ որով վառեց անմիջապէս անոր սրտին մէջ թաղուած զգացմունքներուն բաղմադարեան խարոյկը, հին և քաղցր յիշատակներ ներկայացնելով Ազգասիրին երեւակայութեանը առջև՝ շատ աչերէ մերթ դառն և մերթ քաղցր արտասուաց կայլակներ կթեց Հայաստանի ՈԳԻՈՑՆ նուիրական սափորին մէջ զոր աւաղ իւր ձեռացը մէջ ունի՝ Նա արդարեւ Հայրենեաց համար մը թաղնեալ աչերէ հոսած յորդ ու Ազնիւ

Ազատուքը ժողվելու համար . . . . . :

Բացարձակապէս ըսելով ուսումնասէր Պ. Մկրտիչ Պէշիկթաշլեան առաջին մշակը եղաւ՝ որ անկեց այն շնաշխարհիկ ծառատունկը (Թատրոնը) Ազգիս բուրաստանին մէջ և նորա կլիմային ընտանեցուց զայն որոյ խարիքը շատ չքշեց երևցան և զբոս քաղեց Ազգս մինչեւ հիմայ։ Այս գեղեցիկ ձեռնարկութեամբ այն պատուական երիտասարդը՝ ի վաղուց Թատրոնի սկզբանց վրայ խորհող ոմանց գաղափարը արթընցուց մէկէն և՝ ի գործադրութիւն դրեց ու հետևաբար Օմիւռնեա ընտիր Հայ հասարակութիւն մը կրցաւ կառուցանել Վասպուրական Թատրոնը, և Իրայի մէջ ալ Ազգասէր ոմանց ջանիւքը Երևելեան նոր բահատատ Թատրոնին դրանց բացուիլը հասարակութեան քայլերուն առջև մեծամեծ յոյսեր և յառաջադիմութիւններ կ'դնէ։

Օրթագիւղի Ազգային Թատրոնն ալ անցեալ տարի իւր եռամեայ խնչութիւնը թափելէ ետև, այս տարի դարձեալ կանոնաւոր կերպով սկսաւ իւր ընթացքը շարունակել Տնօրէնութեամբ եռանդուն Հեղինակին, ու եթէ փոքր պակասութիւն մ'ալ նշմարուեցաւ նախընթաց տարիներուն շրջանին մէջ ներկայացնող վարժ դերասանաց՝ ընկերութենէն պակասութիւնն էր. բայց և այնպէս մասնաւորաբար ողբերգուք ոմանք իրենց ընկերակիցներուն մէջ քաջագոյն փայլեցան և պիտի փայլին միշտ և որոնց վերայ մեծ է ինչպէս մեր՝ նոյնպէս և Ազգիս մեծագոյն մասին համարումը։

Մնայս 20դ գիշերը վերջին ներկայացում մը եղաւ որուն մէջ ալ ներկայ էինք ու Վահանայ ողբերգութեան դրուշմը զարնուեցաւ Թատրոնին դրանց սեմերուն վրայ և Վահէի միակ արարուածով ու Թարգմանեալ Օպերետի մը ձևացմամբը խաղարկութիւնը վերջացաւ։

Չեմք զլանար մեր անբաւ շնորհակալութիւնները մատուցանել նաև ազնիւ Պարոն Ռուբինեան պատուական երիտասարդին որ՝ ի սէր և՝ ի պատիւ համազգեաց և ընկերութեան նոյն գիշերը իւրաքանչիւր Արարատցին վերջը անձնուիրաբար մեծ յաջողութեամբ դաշնակ զարնելու դժուարին գործողութիւնը կատարելու յօժարեցաւ։

Վերջին անգամ բացուեցաւ վարագոյրը և Թատրոնաբեմին վրայ տեսնուեցաւ հեղինակը հաստատուն ատաղ մը նման որուն բոլորիքը մահիկի ձևով շարուած էին դերասանական խմբին պատուարժան Անդամները։

Հանդիսականաց մէջէն Արգայ Պ. Տիգրան Լուսուֆեան ուղերձ մը կարդաց ըստ վաղեմի սովորութեան որուն բուն նպատակն էր՝ ի դիմաց բոլոր ժողովականներուն շնորհակալ ըլլալ Արժանայարգ Հեղինակին և քրտնաջան քաջ Դերասանաց.՝ ի վախճանին ցուցաւ Հեղինակը փոխադարձաբար շնորհակալու ըլլալ Թատերական ընկերութեան յաջողութեանը փոփոքող հայրենասիրաց՝ ի դիմաց իւր՝ և բոլոր աշխատակիցներուն . . . :

Ուստի խօսքերնիս համառօտելով կը բարեմաղթենք « շնորհէր երկինք որ արդէն հաստատուած Ազգային ուրիշ Թատրոններն ալ ինչպէս են Օմիւռնիոյ Վասպուրական և Իրայի Արևելեան Թատրոնները երթալով կատարելագործուին ինչպէս որ պէտք է և նոր հաստատուելիքներն ալ յաջողին՝ ի յառաջադիմութիւն և՝ ի բարեբաստութիւն Ազգիս . . :

1862 Փետր՝ 25 Մ. Ն. Ն.

ՍԻՐԱՀԱՐ ՊԱՏԱՆԻ ԵՒ ՈՂՋԱԽՈՀ ԿՈՅՍ

Մինչ մեր հատին էր մատաղ
Շուշան—սիրոյ իմ քնար
Մէջ պարտիզն մի դալար
Անմեղութիւն մեր ի խաղ։

Ցանկարծ երկնից կամարէն
Կայծակի պէս յոլացաւ
Աստղիկ՝ ու իբր պերճ լուսին
Գեղաձիծաղ հոն կեցաւ։

Դեղձան վարսիցդ ոսկէն
Կայծ մի փայլաւ, խնկեղէն
Զգեց սրտի իմ խորեր։
Եւ պացաւ մեր մէջէն։

Մինչդեռ գարուն էր կենցաղ։
Մինչդեռ ծաղիկդ իմ անբաց
Իբր աղաւնի հեզ ուսմամբ
Կ'թառէի քու տերև։

Բայց մինչ հատաւ իմ ամառն,
Եւ քու կոկոն փթթեցաւ,
Կայծն սկսաւ բոլբոլել
Ձիս, իբր սոխակ սիրահար։

Աստ՝ հոս էր պարտիզն
Մութ սենեակ մի փակեցար։
Ինչու համար չես թողուր
Որ այժմ հանգչիմ կարթողն

Քու տերևներ խնկաբոյր
Որ կ'հանդչին մերթ ի զուր։
Աղաւնի մի համար
Ծաղկին անպէտ էր Շուշան

Այլ սոխակի մի համար
Անգին գոհար պատուական։
Վերջն սիրուն շատ ծաղիկ
Որք չեն բէր պէս խատաբրա։

Բայց ան անողորմ Աստղիկ
Չիս շրթայդիդ կապեր պինա։
Գնացի ինկայ իւր տաճար
Լացի իբր Մանակ անմայր։—

տութիւն տեսնէ ու ասկէ եաքը սատանայա-նայադէմ Կոմիտասը աչքս չ'տեսնէ։

ՇՈՒՇ. Թէպէտև Բժիշկն ալ նորա ընկերնէ բայց պիտանի մարդ է, գոնէ ըստ բաւական բժշկութիւն ունենալով միշտ պատիւ ունի։

ԿՒՐ. Քո արժանաւոր վարձքն ալ չ'պիտի մոռնամ։

(Կը ծիծի)։

ՏԵՍԱՐԱՆ Ը

ՇՈՒՇԱՆ ԱՌԱՆՁԻՆ

Վարձքդ քեզ ըլլայ, իմ վարձքս մոացդ փոփոխութիւնն էր, կատարեցաւ բաղձանքս, զի կատարեցաւ ալ կեղծաւորութեան և շողոքորդութեան անհամատատ անիւը։ Թող համոզվին նոքա, որք կեղծեալ դիմակաւ իւրեանց ամէն կերպ բաղձանաց հասնիլ կ'կարծեն, բայց սրտալ կարծիք, կեղծաւորութիւնը՝ գործոյն կատարելութեան ատեն կը խայտառակի, և անապարծից ու ձեւացեալ գիտնականաց սուտ համբաւը յերև ան կելնէ, այս դարուս ամէն բան կը լեր եմ և գիրեմ բառերը խել մի ինքնահաւան անձանց շրթունքէն պակաս չէն։ արդեօք նոքա օր մի մեր իմաստակ եղբօր խայտառակ վիճակը չ'պիտի՞ վայելեն, և այս ալ կայ որ այսպիսի անձինք երբեք բանի մի և մեկուսիալ չէն հաւանիր պատճառը եթէ փնտռեմք, ուրիշ բան չէ. եթէ ոչ իրենք արդէն իրենց ապիտութենէն չէն կրնար ամէն բանի արժանաւոր յարգը որոշել, ու բաւական խոհական անձանց վերայ նախանձելով կը նային և իւրեանց նախանձու կրից բորբոքը մարելու համար, կսկծին բամբասանք ու ծաղր ընել այլոց առջին։ վայ այսպիսի խեղճատակ անձանց որք վերջապէս մեր իմաստակին միմոս կերպարանքը առնելով ծիծաղի շարշառնեմ մի պիտի ըլլան։ խեղճ իմաստակ, եկ կարծէիր որ կեղծաւորութեանդ վատահանալով պիտի վայելես սիրուն օրիօրդի մի ցանկալի ընկերութիւնը։ բայց իմացնեմ որ խորամանկեցաւ մեռած յուսայդ երերեալ ղեկը, փոշի դարձան կարծեցեալ երջանկութեանդ խորխորատ սիւնները, որոց կրթնած էիր, վախճանակ չքեղ վասայ և ճոխութեան ասպարէզը կոխելու, ահա խայտառակութեան և մոռատանջութեան մէջ կ'դիմես ապիտաբար, օրինակ ինքնութեան մէջ կ'դիմես ապիտաբար, օրինակ եղար նոցա, որոց ամէն գործոց մէջ առաջնորդութիւն, խաբէութիւն, կեղծաւորութիւն, շողոքորդութիւն, ու անապարծութիւն եւայլն։ Լրթէ խեղճ իմաստակը իմանայ այս դէպքը յանկարծական պատահութիւն մի պիտի տարածուի իր երակաց մէջ, ահա հոս կը ներկայանայ, հետանամ ջղլայ որ տարակուսի իմ վերաս։

ՏԵՍԱՐԱՆ Թ

ԻՄԱՍՏԱԿ ԱՌԱՆՁԻՆ

Ամենեւին խելքս չ'հասնիր թէ ինչու համար այսչափ ժամանակը կ'երկարի եղեր, ամէն վայրկեան երկար երկար տարիներ կերևնան եղեր աչքիս, ինչ զարմանալի բան է եղեր փեռայութիւնը որ սիրտս կը վառի կը բարբոքի եղեր, անշուշտ Վարդանուշայ սիրան ալ անհամբեր կ'սպասէ ու կը նեղուի ինձ համար զի ինչպէս ես նայնպէս ալ այն, երբեք իրարմէ տարբերութիւն չունիմք եղեր։ Ա՜հ. որչափ կամենամ եղեր որ ոգէս բժիշկն խոսքին խաբուելով՝ մնայ որ պղտիկ պիտի լինայի եղեր, բայց իմաստութիւնս ոդէկ ծածկեց եղեր զայն, չ'իշեմ այսու հետև այսպէս ալ զեռապի յիշատակներ որ սիրտս կը տրամի եղեր, շնորհակը իմ խելքս ալ վերէ է թէ ես որչափ երջանիկ եմ։ Վարդանոյշ ուրախացիր մեծաւ ուրախութեամբ որ զիս քեզ ընկեր կ'սնեցնաս եղեր, Ա՜հ քիչ օրէն պիտի սիսի հարսանիքը հոգ մի ըներ սիրտդ մի հատցներ, հանդարտ եղիր որչափ ալ ուշանայ դարձեալ ամուսնիդ ես եմ եղեր, ով կարող է եղեր լինձ չափ իմաստուն փիլիսոփայ ըլլալ որ կարենայ եղեր հօրդ հաճելի ըլլալվ քեզ հետ ամուսնանալ եղեր, որչափ կը փափաքիմ այժմ ծանօթութիւն մի առնուլ թէ արդեօք ինչ կընէս հիմայ, Վարդանոյշ եղեր անշուշտ ես եմ հիմայ մոացդ առարկայն։

Շարունակելի։

Անծարդոյ խմբագիրք Վարդ պատուական Հանդիսի։

Կ'խնդրեմ որ նամակիս մէջ փակուած մէկ յօդուածը՝ որ գաղղիարէնէ թարգմանած եմ, ձեր ազգօգուտ Հանդիսին միջոցաւ հրատարակելու բարեհաճիք։

Յ. Մ.

ԳԻՒՈՒԵՆԻ

ԴԱՄԲԱՆԱՊԱՆ ՃԱՌԸ

Սդակիս պարոններ, չեմ կրնար աւելի բարբ-

ՕԴԱՅԻՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ԿԱՄ

ՖՆԱՐԵՐԳՈՒ ՀՈՒՏՈՐԻՄԻ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

Տան և ինեերբրդ դարուս մէջ Երևան եղած համբաւաւոր փիլիսոփայ մի՝ որոյ ամէն մէկ վէճերը պէտք էր իբր անսուտ և անդարձ վէճ ու պատգամ Ս. բամաղդայ ընդունել, շատ անգամ հրապարակաւ ու առանձնակի խմացուցած էր մեզ ուրուականներու ստուգութիւնը ֆէերիներ— գոյութիւնը նոցա զօրութիւնը և իր սիմնական արհեստին անսխալութիւնը պակաս կը գտնար, բայց մեք մեղէն քանի մի ոչ պատճառներ իբր պատճառ մէջ բերելով էինք ուզեր հաւատալ կամ ուն կընդիր ըլալ նորա հրաշափառ և սքանչելի խայտառակ խօսքերուն, նախ՝ թէ որովհետեւ Ֆրիսոնեայ եմք ու պարտիմք զանոնք անդօր ճանաչել. ըստ այնմ "իշխան աշխարհիս ընկեցայն արտաքս" երկրորդ՝ բազմաթիւ օրինակներ տեսնելով այլ և այլ վէպերու և պատմութեանց մէջ զի այնպիսի բաներ սուտ ու խաբեբայ մարդկանց հնարքներ են, որք իրենց նմանները վախցնելու նպատակաւ դեղեղմանոցներ, տուներ, աւերակներ, և այլն տեղեր կը շրջին, ու շատ անգամ ալ Երևան ելնելով իրենց խարդախութիւնը կը խայտառակուին, և ուրիշ այսպիսի շատ մի խօսքերով ջրել կուզէինք քաջ փիլիսոփայիս խօսքերը. բայց 'ի զուր զի նա լաւ սերտած էր հաղար և մէկ գիշերներուն մէկ քանի առասպելներ չորք եղբարց վէպը ու տեղեակ էր նաև սիմոն կախարդին գործոցը իր մէկ հատիկ ընդիր վեցհաղարեակով որոյ միջնորդութեամբ դատած էր էրէ—ակն զօրութիւնը, յամառեալ մնաց, և իմերջնումն այս հետաքրքրական ու զարմանալի հնարքը մոռացէր է զի նորա միջնորդութեամբ խարող ըլայ յաղթող ձև անալ զմեզ վախցնելով։ Լու այս է։ Քաջ ու շիտ փիլիսոփան մէկ քանի ամիս առաջ իր անդրդ ընկերոջը՝ այն է իր ձայնակցին չարաչար մահը տեսնելով այս օրերս կերթայ նորա շիրմէն կուղղի սիրմ կառնէ և զայն իր արհեստին և անուանը համաձայն, ազդու փիլիսոփայութեամբ ֆիզիկական արհեստներով կամ լաւ ևս վեցհաղարեակին միջնորդութեամբ կատարեալ ուրուական մի կը շինէ ամենեին յարևնման իր յայնակցին. և օդայն սատան* այն է սատանան, նորա որավայնին մէջը գնելով, կը կնքէ նորա անուն օդային սա բհանդան, որոյ անուամբ արդէն սատանայ մի կար որ իր հանգուցեալ յարնակցին անդրդ ու մտերիմ բարեկամներ, և կը խրկէ զայն հատարակութեան մէջ պարզամիտները խաբելու և վախցնելու համար։ Թող չզարմանան ընթերցողք փիլիսոփայիս այսպիսի արարողութեանը վերայ, զի նոյն ինքնեցեալն կենդանութեան ատենեալ միշտ իր հոգին ու խօսքեր տրած էր նորա փորը և բերան և այնու իբր ձայնակից մի ըրած էր իրեն, որպէս զի հատատատութիւն տայ իր վէճերուն։ Ահա սա չարի գրածներս այս օրերս Երևան եղած ամենատարաստելի հրեշ ուրուականի մի գոյացութեան նիւթերուն և պատճառներուն վերայ էին, հիմայ դառնամք մեր բուն նպատակին, այսինքն ցուցնել թէ ինչ գործքեր ըրաւ այս ուրուականը։

Քանի մի օր յառաջ երբ ես տնտեղեակ այս աղմագործ փիլիսոփայիս հնարքներուն, առանցին լեռան սարատ մի գայլ ուր ան զկը գտնուէին շատ մի չիրմներ ու նաև երկու տիս յառաջ թաղուած քնարերգ ու հրեատարի մի սեւ ածիւնը։ Նպատակս էր քիչ մի զբօսնուլ և կամ հոգւոց մի կարդալ նորա վերայ դիմածաբար, բայց մեծ եղաւ զարմանքս ինչ տեսն տեսայ զի նորայ գերեզմանը բոլորովին գետնին հաւասարած անեղեայթ եղած էր՝ և իսկայն կարծեցի զի Մովսէսին նըման եղած է. որպէս զի ապագային իբր կուռք չպաշտուին նորա ոսկերոտիք իր նամախոհ անձանց քաջաժառանգ զաւակներէն, ու երբոր ես այս եղածին վերայ նուրբ խորհրդածութեան մէջ ինկած կը մտածէի, յանկարծ սարսափելի հրեշ մի ձեռքը տնդրին բիրմի սօփա բռնած, գլուխը վատակայ հին ու ժանկոտ սաղաւարդ մի, բարկութենէն կրակ կորած, ու միանգամայն այլ այլած յաղթութիւն յաղթութիւն չարաչար յաղթութիւն, պօռալով քովս մօտեցաւ ահաւելի դէմքովը, զարհուրեցայ առջի բերան, ու սկսայ դողալ, անէծք քէ՛զ նեղվեալ շիրմ, ըսի և մէկէն հրեշին դարձայ որ կատաղաբար բիրը վերցուցած գլխուս խլէցնելու փորձ կը փորձէր, իրաւունք պօռացի, մի զարներ, համբերէ, ոչ ոչ ըսաւ սասակութեամբ, ես իրաւանց և արդարութեան ատենին սուրհանդակ չեմ, այլ քեզմէ իմ վրէժս լուծելու անգութ դահիճ մի եմ. զի դու համարձակեցար կորել իմ գարի թելերը որովք պիտի խգութ շարժէի շատ մի քարացեալ սրտեր մարդկանց այն մէկ պարո—

* Տես թուղթիկ թիւ 12. սուրհանդակ բառին նշանակութիւնը։

ասիպէսի թէ «Ես քու քեռին չեմ» ինչու տղայէս ըսէր ու զիս քու հնարքովդ կողոպտեցիր։

ԵՐԻ ՍԻՐՈՑ

Ա՛հ ինչ քաղցրիկ տեսարան
Ինչ գեղեցիկ այն վայրկեան
Այն ինչ ի ծոց սիրուհւոյս
Վայելէի բիւր բերկրանս։
Ո՞ւր են արդեօք ո՞ւր փախան
Ո՞ւր իմ աչքէս սլացան . . . .
Ա՛հ մէն մի ակամ մի տարի
Ինձ վշտագին կերթի։

Ամպ ամպեր թանձրամած
Գողցան աչքէս արտալած .
Անձրև կարկուտ հուր տեղայ
Զուտա գլխիս անխնայ։

Դիշերն 'ի բուն երազով
Ցորեկն անհուն հոգերով
Հալիմ մաշիմ անդադար
Անձամբ հրով բորբոքեալ։

Ա՛հ ինչ կրսեմ, ինչ խօսիմ
Ինչու զուր տեղ գանգատիմ
Սիրուհիէս չեն զատած
Զիս, սեռս ամպեր թանձրամած։

Չէ՛ չեմ թշնամ ես քեզ
Ատելիկ ինձ օր խոստացար
Օ՛ր երջանիկ օր պայծառ
Պիտի վայելեմ միշտ և յար։

Լրեկ տեսայ իմ ԼՈՒՍԻՆ
Որ սրտիս մէջ կը շողար
Նաև այսօր խնդագին
Պիտի տեսնեմ անպառաձառ։

ԳԱՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս անունով գեղեցիկ պարբերական թերթ մի ալ սկսաւ հրատարակուիլ Օմիւռնիա խմբագրութեամբք Պ. Գրիգոր Պ. Պարսիզպանեանի և Պ. Տ. Դարագաշեանի, որոց նիւթերն են բանասիրական, բնական, բարոյական և առևտրական։

Արդ քաջ համոզուած ըլլալով զի օրագիրներու և հանդէսներու օր ըստ օրէ շատնալը ազգի մի օր աւուր յառաջադիմելու ապացոյց մի է և եթէ ըսուսուրութեան առաջին չէ գոնէ երկրորդ պատճառ կրնայ համարուիլ, վասն որոյ Հանդիսիս գալուստը շնորհաւորելնէս ու կատարեալ յաջողութիւն և յաբատեւութիւն մաղթելնէս յետոյ կը խընդրեմք զի սիրելի ազգայինք ևս իրենց պէտք եղած քաջալերութիւնն 'ի գործ դնեն սոյն ազգօգուտ Հանդիսին բաժանորդ դրուելով որ կը խոստանայ ձեռքէն եկած ամեն փոյթն ու ջանքը չխնայել Հդիս։ և կը յուսամք զի ԳԱՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ իւր անուան ստուգաբանութեան համեմատ վարուելով դիտութեանց հեշտալի տեսարան մի պիտի ընծայէ ազգայնոց և արժանաւոր ընդունելութիւն պիտի գտնէ Հայ գրականութեան ասպարիզին մէջ։

Գարուն Հայաստանի կը հրատարակուի ամիսը երկու անգամ. վեցամեայ գինն է 8 ֆրանգ, Ճամբու ծախքը առնողին վրայ ըլլալու պայմանաւ։

Սարագրութեան տեղն է Կ. Պոլիս Ինթերցասիրաց Թանգարանը Մեծ Նոր խանի վերի դուռը թիւ 6. և Պալըգ պազար կամուրջին դլուխը Պ. Խ. Գալէնտէրեանի սենեակը։

ՎԱՐԴԸ ՁՐԻ ՁԷ

Մեր յարգոյ բաժանորդներէն մէկ քանին մինչև յայսօր չխմանալով թէ Վարդը ձրի է, շարունակ ընդունած ու հոտոտած են, բայց երբ իմացան թէ սխալ կարծած են «մենք Վարդ չենք ուզեր, ահա գարունը կու գայ, ինչ պէտք է ստակով Վարդ առնել» պատասխանը տալով ետ խրկած են ցրուիչը, առանց մինչև յարդ հոտոտածները ետ խրկելու. և ոմանք ալ միայն մէկ քանի ԲԷՐԲԷՐ թափած ու թռամածները խրկած են։

Ուստի մեր կոչմանէ սա չափ միայն կը սեմք նոյն անձանց թէ «Վարդը ձրի է, և ձրի կարծողները թաղքանի մը ամիս ալ սպասեն, բայց չմոռնան մինչև յարդ հոտոտածներուն գինը կամ Վարդերը հատուցանել»։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լսիցէ։

Գ. Յաւերժահարս։

Հանդիսիդ միջնորդութեամբ՝ Աշանջենական Օրացոյցին վրայօք աւելի ընդարձակ բացատրութիւն մի տրուիլ կը խնդրուի շատերէն, վասն զի շատ քիչեր սովրած են զայն և այն ալ անկատար կերպիւ։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆՔ
ԹՈՎՄԱՍ Պ. ՊԵՌԵԱՆՑ
ՍԱՐԳԻՍ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Ի ԴԱՒԱԹԱ Կ. ՊՕԼՍՈՅ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ
ՀՑՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՓՈՂՈՑ ԹԻՒ 47